ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ապրիլի 2024 թվականի N 154 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ ԹՈՐՈՍԳՅՈՒՂ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-042-0216-0001-ԻՑ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 0,99996 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2024 թվականի մարտի 12-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ**.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի վարչական տարածքում գտնվող (բնակավայր Թորոսգյուղ) Հայաստան Հանրապետությանը պատկանող, 08-042-0216-0001-ից կադաստրային ծածկագրով անտառային նպատակային նշանակության անտառ հողատեսքի հողամասից առանձնացված 0,99996 հեկտար մակերեսով անտառային տարածքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Թորոսգյուղ, Գոգհովիտի խճուղի, 23/1 անտառային տարածք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2024 թվականի ապրիլի 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ապրիլի 2024 թվականի N 155 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐ ՑՈՂԱՄԱՐԳ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 0,5 ՀԵԿՏԱՐ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-112-0101-0003-ԻՑ) 3-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐՈՏԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՒՍՏԱՄ ՎԱՍՅԱՅԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետյան կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշման 2-րդ և 6-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 19-ի թիվ 24-Ա որոշումը և 2024 թվականի ապրիլի 1-ին Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված Ռուստամ Աբրահամյանի դիմումը. որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի (բնակավայր Ցողամարգ) սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,5 հեկտար 3-րդ կարգի արոտը (կադաստրային ծածկագիր՝ 08-112-0101-0003-ից) գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության Ռուստամ Վասյայի Աբրահամյանին **(անձնագիր՝ AR0213039, տրված՝ 13.03.2013թ., 034-ի կողմից)** և կնքել պայմանագիր՝ պարզ գրավոր ձևով

2. Որոշման 1-ին կետում նշված հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել է **2000 (երկու հազար)** Հայաստանի Հանրապետության դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2024 թվականի ապրիլի 2
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ապրիլի 2024 թվականի N 156 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐ ՍԱԼՈՒՏ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 2,0 ՀԵԿՏԱՐ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-099-0102-0001-ԻՑ) 3-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐՈՏԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԻՆԱՍ ԼՅՈՒԴՎԻԳԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետյան կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշման 2-րդ և 6-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 19-ի թիվ 24-Ա որոշումը և 2024 թվականի ապրիլի 1-ին Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված Մինաս Խաչատրյանի դիմումը. որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի (բնակավայր Սալուտ) սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 2,0 հեկտար 3-րդ կարգի արոտը (կադաստրային ծածկագիր՝ 08-099-0102-0001-ից) գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով երեք տարի ժամկետով տրամադրել վարձակալության Մինաս Լյուդվիգի Խաչատրյանին **(ն.ք.՝ 002803724, տրված՝ 22.10.2015թ., 034-ի կողմից)** և կնքել պայմանագիր՝ պարզ գրավոր ձևով

2. Որոշման 1-ին կետում նշված հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել է **7000 (յոթ հազար)** Հայաստանի Հանրապետության դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2024 թվականի ապրիլի 3
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 ապրիլի 2024 թվականի N 157 - Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՅԿ ԳՈՒՐԳԵՆՅԱՆԻՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 72-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի «ա» պարբերության, ***որոշում եմ.***

Անհատ ձեռնարկատեր Հայկ Գուրգենյանին (ՀՎՀՀ՝ 57313461, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 63.907753 /2016-04-27, իրավաբանական հասցեն՝ գյուղ Աշոցք 1 փողոց, 8, 1 ընդհանուրմակերեսը՝ 25 քառակուսիմետր) 2024 թվականի համար տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2024 թվականի ապրիլի 3
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ապրիլի 2024 թվականի N 158 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27 - Ի ԹԻՎ 80 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրարի 27-ի թիվ 80-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման վերնագրից հանել «ԻՆՔՆԱԿԱՄ» բառը:

2) Որոշման նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Քաղաքացի Ասյա Պանդուխտի Ենգոյանը (ծնված՝ 1948 թվականի դեկտեմբերի 28-ին,) 2024 թվականին փետրվարի 17-ին դիմել է Աշոցքի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող 08-019-0022-0002 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի հողեր՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.29618 հեկտար մակերեսով հողամասի վրա առկա, բնակելի նշանակության կիսանկուղը օրինական ճանաչելու խնդրանքով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Արփենի բնակավայրի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի մայիսի 10-ի թիվ 02 որոշմամբ և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի (գրանցված 1015-ով) Ասյա Պանդուխտի Ենգոյանի /ծնված՝ 28-ը դեկտեմբերի 1948 թվական/ անվամբ սեփականաշնորված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Արփենի գյուղի 7-րդ փողոց, կիսանկուղ 1/1 հասցում գտնվող, 08-019-0022-0002 կադաստրային ծածկագրով 0.29618 հեկտար մակերեսով հողամասի վրա կառուցված բնակելի նշանակության 24,64 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով կիսանկուղը կառուցվել է 1996 թվականին (մինչև 2001 թվականի մայիսի 15-ը):

Կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և 42 հոդվածի 1-ին մասով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով ու 50-րդ կետով, որոշում եմ՝.»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2024 թվականի ապրիլի 4
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ապրիլի 2024 թվականի N 159 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18 - Ի ԹԻՎ 114 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 18-ի թիվ 114-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) Որոշման նախաբանում «2024NSDVQ» ծածկագիրը փոխարինել «2024N2SDVQ» ծածկագրով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2024 թվականի ապրիլի 4
գյուղ Աշոցք